Դավիթ Թինոյան

ԼԵՎՈՆ II-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԵԳԻԾԸ 1280-ԱԿԱՆ ԹԹ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Բանալի բառեր. Հայոց թագավոր, տարածաշրջան, իլղանություն, խաչակրաց պետություններ, մամլուքներ, Մերձավոր Արևելք,շրջափուլ, հայ-մամլուքյան համաձայնագիր:

13-րդ դարի վերջին տասնամյակները հայոց թագավորության համար իրապես բարդ ներքաղաքական ու արտաքին քաղաքական ժամանակաշրջան էին: Թեպետ մոնղոլական իլղանությունը գտնվում էր ռազամաքաղաքական հզորության պայմաններում, բայց արդեն նկատելի էին այդ տերության աստիճանական անկման նախանշանները: Դրան էր գումարվում մամլուքյան տարածաշրջանային ազդեցության աճը ևս: Այն պայմաններում, երբ Քրիստոնյա Եվրոպան ազդեցիկ ներկայություն այլևս չէր կարողանում ապահովել Մերձավոր Արևելքում, հայոց թագավորությունը հարկադրված էր պահպանելով քաղաքական ու տնտեսական բավական սերտ կապերը արևմտյան քաղաքակրթության հետ ուժերի նոր բալանսի ձևավորման պայմաններում հենվել մոնղոլական իլղանության վրա: Դրանով հանդերձ 1270-ական թվականներից իլղանությունը այլևս չէր կարողանում ապահովել տարածաշրջանում բացարձակ գերիշխանություն: Ի հակադրություն դրա, մամլուքյան պետությունը աստիճանաբար դառնում էր ամենաազդեցիկ քաղաքական ուժը տարածաշրջանում: Լևոն Բ-ի գահակալման երկրորդ շրջափուլում՝ 1280-ական թթ., հայոց թագավորին հաջողվել էր ձևավորել բավական կայուն ներքին իրադրություն: Հայոց եկեղեցու և արքունիքի հարաբերությունները գտնվում էին կայուն վիճակում, ներքաղաքական խժդժությունների ժամանակաշրջանը կարծես թե այլևս անցյալում էր: 1275-1276 թթ. մամլուքների և իկոնիացիների արշավանքների հետևանքները ևս այլևս անցյալում էին: Ճիշտ է, բախումները մամլուքյան սուլթանության հետ շարունակվեցին նաև 1270-ական թթ. վերջերին (մասնավորապես Հռոմկլայի, Անավարզայի մոտ), բայց այս անգամ արդեն ռազմաքաղաքական առումով առավելությունը հայ-մոնղոլական դաշինքի ձեռքում էր գտնվում: Նշելի է այս համատեքստում հատկապես Լևոնի և հայոց թագավորության տարածաշրջանային դերակատարման ու ազդեցության վերելքը: Լինելով տարածաշրջանի ամենաազդեցիկ տերության՝ իլղանության մերձավոր դաշնակիցը, հայոց թագավորի ազդեցությունը ամբողջ Մերձավոր Արևելքում էապես աճեց: Հարկ է նշել, որ այդ խորապատկերի ներքո հայկական թագավորությունը ևս յուրատեսակ կամուրջ էր հանդիսանում նաև եվրոպական պետությունների՝ մոնղոլների հետ քաղաքական ու տնտեսական կապերի համար: Ամենևին էլ պատահական չէր Այասի դերակատարման հսկայական աճը, որ տեղի ունեցավ Լևոնի գահակալման շրջանում: 1277 թ. հայոց թագավորությունը վերջապես կարողացավ որոշակիորեն կայունացնել իր հյուսիսային սահմանների մոտ հարյուրամյակից ավելի առկա վտանգը: Այդ թվականին Ռումի սուլթանության տարածքը վերջնականապես անցավ մոնղոլական ուղղակի կառավարման ներքո: Բավական հետաքրքիր է Հեթում պատմիչի թողած հիշատակությունը վերոգրյալ դեպքերի առնչությամբ. «Իբրեւ կատարեաց Ապաղայ ուխտ սրտի իւրոյ ընդդէմ երկրին Թուրքաց, եւ Թաթարք լցան աւարաւ եւ ճոխութեամբ, զոր ստացան յապստամբ Սարակինոսաց, կոչեաց առ ինքն զարքայն Հայոց, եւ ետ ի ձեռս նորա զթագաւորութիւնն երկրին Թուրքաց. Զի հայր նորա եւ նա միշտ հաւատարիմ գտան Թաթարաց»[1]: Մոնղոլ ինքնակալի այս քայլը անշուշտ վկայում էր Լևոնի չափազանց մեծ հեղինակության մասին, բայց դրանով հանդերձ այն խոսում էր Աբաղա իլղանի քաղաքական հեռատեսության մասին: Վերջինս շատ լավ հասկանում էր, որ Փոքր Ասիայի մի զգալի մասը տրամադրելով իր դաշ-

[1] Հեթում պատմիչ թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ, Վենետիկ, 1842, էջ 54:

նակցին ռազմավարական տեսանկյունից տարածաշրջանում շարունակելու էր պահպանել մոնղոլական տիրապետությունը, և այդ պարագայում այն հաստատապես ավելի ամուր էր լինելու քան մոնղոլական ուղիղ կառավարման դեպքում: Սակայն realpolitik-ը ենթադրում էր, որ Հայոց թագավորը նման պայմաններում, հարավում ունենալով մամլուքյան տերության պես ռազմավարական հակառակորդ-հարևան, իսկ արդեն հյուսիսում տիրապետելով հսկայական այլալեզու ու այլադավան բնակչությամբ տարածքների, ավելի ու ավելի կարիք պետք է ունենար մոնղոլական հովանավորության: Հարցին խորագիտակ Լ. Տեր-Պետրոսյանը ևս մեկ պատճառ է մատնանշում. մասնավորապես դա այսպես կոչված «երկակի ստանդարտների» կիրառումն էր մոնղոլների կողմից հայերի ու սելջուկների հանդեպ: Մասնավորապես հայկական թագավորության նկատմամբ բարյացակամ քաղաքականությունը ներկայացվում է ոչ միայն որպես դաշնակցային հարաբերությունների արդյունք այլ նաև այն հանգամանքի արտացոլանք, որ ի հակադրություն սելջուկների հայերը կամովին էին ընդունել մոնղոլների գերակայությունը, և համաձայն մոնղոլական օրենքների արդեն տարբերակված մոտեցման անհրաժեշտություն էր ի հայտ բերում երկու ստորակա պետական կազմավորումների հանդեպ[1]: Ինչևէ ամենով հանդերձ, փաստենք, որ այս առաջարկը խորապես կշռադատված քաղաքական առաջարկ էր իլղանի կողմից: Անշուշտ առաջարկը զգայական տեսանկյունից չափազանց գրավիչ էր հայկական կողմի համար, մանավանդ, որ դեռևս շատ ժամանակ չէր անցել Լևոն Մեծի համահայկական թագավորություն ունենալու իղձերից: Դրան հավելենք նաև այն, որ թե Լևոն Բ-ն և թե նրա հայտնի երկու նախնիները կրելով «Թագավոր ամենայն հայոց» տիտղոսը յուրատեսակ հավակնություններ էին ցուցաբերում շրջակա հայահոծ տարածքների նկատմամբ (թեպետ Մեծ Հայքը ներառված չէր Ռումի սուլթանության մեջ, բայց այն իր մեջ ներառում էր հայահոծ շրջաններ, բացի այդ չափազանց մեծ էր այդ երկրամասի տնտեսական ու աշխարհագրական կարևորությունը ևս): Դրա վկայություն էր թե՛ Հեթումի և թե՛ որդու վարած քաղաքականությունը Մեծ Հայքի աշխարհիկ և հոգևոր իշխանությունների նկատմամբ և այդ իշխանությունների՝ կիլիկյան արքունիքի հանդեպ որոշակիորեն ստորակա կարգավիճակը: Լևոնն անշուշտ հասկանում էր, որ ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում առաջարկի ընդունումը իրատեսական չէ: Հարդյունս. «Իսկ թագաւորն Հայոց իմաստուն և խոհական շնորհ կալաւ վասն պարգևին հրաժարելով յայնմանէ, իբրեւ անբաւական ի տնտեսել զերկու թագաւորութիւնս»[2]: Ավելին, ըստ պատմիչի՝ հենց հայոց արքայի խորհրդով է տեղի ունենում մոնղոլական ուղիղ կառավարման անցումը սուլթանությունում[3]: Լևոնը խորհուրդ է տալիս հետագա ապստամբություններից և անհնազանդություններից խուսափելու համար փաստացի վերացնել սուլթանության կիսանկախ վիճակը: Հարկավ հեռու ենք այն մտքից, թե իլղանի որոշումը պայմանավորված էր հայոց արքայի առաջարկով: Այս պարագայում հաշվի առնելով Ռումի սելջուկների և մամլուքների համագործակցության հեռանկարը, պարզ է, որ Աբաղան պետք է գնար նման քայլի նույնիսկ առանց Լևոնի խորհրդի ևս: Ինչևէ, որոշման արդյունքում փաստացիորեն Ռումի սուլթանության քայքայման գործընթացը էլ առավել արագացավ հաջորդ դարասկզբին. այդ հզոր տերությունը արդեն բաժանված էր փոքրիկ իշխանությունների: Իսկ հայոց թագավորության համար էական հանգամանքը այս գործընթացում այն էր, որ այն վերջապես կարող էր հարաբերականորեն հանգիստ լինել նրա հյուսիսային սահմաններում: Կարելի է կարծել, որ 1280-81 թթ. մեծ արշավանքի հարցում Ռումի սուլթանությունում տեղի ունեցած իրադարձությունները նախերգանքի դերակատարում էին ունեցել: Ըստ էության, սրանով Աբաղան և նրա հետ նաև Լևոնը ապահովագրեցին իրենց թիկունքը դեպի Ասորիք կատարած մեծ արշավանքից առաջ: Հարկ է փաստել, որ մի քանի տասնամյակ շարունակ Ասորիքում և դրանից հարավ ընկած տարածքներում ամրապնդվելը դարձել էր իլղանության idea-fix-ը, երբեմն մոն-

[1] Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և և հայերը, հ. Բ, Ե., 2007, էջ 313:
[2] Հեթում պատմիչ, էջ 54:
[3] Նույն տեղում:

ղոլները բավական մոտ էին դրա իրականացմանը, ինչպես օրինակ 1250-ական թթ. վերջին, բայց բոլոր այս փորձերը ի վերջո երկարատև հաջողության նախերգանք չէին դառնում, ավելին՝ տարեց տարի մեծանում էր տարածաշրջանում մամլուքյան ազդեցությունը: Այդ համատեքստում կարևորելով քրիստոնեական արևելքի առկայությունը և որոշակիորեն հասկանալով մոնղոլական ներկայության ժամանակավոր լինելը՝ Լևոնը ամեն ինչ անում էր խաչակրաց ներկայությունը լևանտյան ծովեզերքին պահպանելու համար: Այդ ներկայությունը, որը երկար ժամանակ «բուֆերային» դերկակատարում էր ունեցել հայոց թագավորության համար չափազանց կարևոր էր վերջինի հարավային սահմանների ապահովության տեսանկյունից: Այդ առումով հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ թե՛ մոնղոլների և թե՛ հայերի շահերը կատարվելիք արշավանքի հարցում համընկնում էին, այդուհանդերձ մամլուքյան ազդեցության վերացումը մոնղոլների համար ուներ ռազմավարական նշանակություն, իսկ հայոց թագավորության համար այն շատ ավելի մեծ՝ կենսական նշանակություն ունեցող խնդիր էր: Այս պարագայում, ըստ էության դրված կարող էր լինել հայոց պետության լինելիության հարցը, ուստի և դրանով էր պայմանավորվում Լևոնի չափազանց մեծ շահագրգռվածությունը արշավանքի կայացման հարցում: Հեթում պատմիչը ուղղակիորեն նշում է. «Ի կատարիլ այսոցիկ աղաչեաց զնա (Աբաղա իլղանին-Դ. Թ.) արքայն Հայոց վասն ազատութեան սուրբ երկրին ի ձեռաց հեթանոսաց. և նա խոստացաւ, միանգամայն և խորհուրդ ետ թագաւորին Հայոց, զի դեսպանս արակեսցէ առ պապն և առ ուղղափառ թագաւորս»[1]: Պատմիչի խոսքերը ևս մեկ անգամ վկայում են, որ, բացի այլ գործոններից, մոնղոլների կողմից հայկական թագավորությունը դիտարկվում էր նաև որպես միջնորդ օղակներից մեկը եվրոպական տերությունների հետ հարաբերություններում: Դա էր պատճառը, որ այդ հանձնառությունը իլղանի կողմից դրվեց հենց հայոց թագավորի վրա: Այդուհանդերձ արշավանքի դիվանագիտական նախապատրաստումը դրական արդյունք չապահովեց, ոչ եվրոպական պետությունները և ոչ էլ նույնիսկ Լևանտի ծովեզերքի խաչակիրները իրական որևէ մասնակցություն չունեցան: Եվ դա չնայած այն հանգամանքին, որ ինչպես նշում է Ռ. Գրուսսեն, «Մինչդեռ այս անգամ նույնպես, և ավելի քան 1260 թվականին, ֆրանկներն էին, որ առավելագույնս պիտի օգտվեին մոնղոլական հաղթանակից»[2]: Զուտ բարոյական տեսանկյունից Գրուսսեն իրավացի է, մանավանդ, որ Աբաղան խնդիր էր դրել մամլուքներին դուրս քշելուց հետո գրավված տարածքները հանձնել քրիստոնյա կառավարիչներին: Դա ենթադրում էր անշուշտ թե՛ Լևոնի տիրույթների ընդարձակում և թե՛ առավել ևս խաչակրաց պետությունների վերականգնում ու ընդլայնում: Բայց այստեղ խնդիրը պետք է դիտարկել realpolitik-ի տեսանկյունից. արևաքամ եղած, երկպառակչական ու մամլուքների դեմ կռիվներից հյուծված խաչակրաց իշխանությունների մնացորդները ստեղծված պայմաններում իրենց փլուզված դիրքերի մնացորդները պահպանելու հույսը պահելու համար հարկադրված էին պահպանել չեզոքություն: Դրանից զատ խաչակիրները իրական ռազմական ուժ գործնականում այլևս չունեին և հարկադրված էին ապավինել հայ-մոնղոլական զորքերի հնարավոր հաջողություններին: Դա էր պատճառը, որ Աքրայի ֆրանկ իշխանավորները ի վերջո մալուքների հետ բանակցությունների արդյունքում պարտավորվեցին առաջիկա ռազմական գործողությունների ընթացքում պահպանել չեզոքություն: Ընդ որում արշավանքի համար կար ևս մեկ նպաստավոր հանգամանք. բանն այն է, որ Եգիպտոսում այս շրջանում սկսվել էին երկպառակչական կռիվներ, Քալաուն սուլթանի դեմ ապստամբություն էր բարձրացրել Դամասկոսի կառավարիչը: Փաստացիորեն ամենը նպաստավոր էր երկար նախապատրաստած արշավանքի իրականացման համար: Այդուհանդերձ 1280 թ. մոնղոլները իրականացրեցին արշավանքի նախապատրաստական փուլը: Մոնղոլական բանակը, որոնց հետ ամենայն հավանականությամբ պետք է որ լինեին հայկական զորամասեր, ներխուժեցին Հյուսիսային Սիրիա՝ գրավելով նաև Հալեպը: Այն,

[1] Նույն տեղում:
[2] Գրուսսե Ռ., Պատմություն խաչակրաց, Լևոն Տեր Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հատոր Ա, Ե., 2005, էջ 325:

որ արշավանքը նախապատրաստական և ինչ որ առումով նաև հետախուզական բնույթ էր կրում, հստակորեն զգացվում է նրանից, որ գրավելով Հյուսիսային Սիրիայի մեծ մասը այդ թվում և Հալեպ քաղաքը, մոնղոլները ավերելով և ոչնչացնելով բնակչության զգալի մասին ի վերջո հետ նահանջեցին: Դրան զուգահեռ կային ևս երկու պատճառներ. նախ հյուսիսում Ոսկե Հորդայի կողմից հարձակում էր ձեռնարկվել իլղնության հյուսիսային սահմանների նկատմամբ (որը մոնղոլների համար ուներ կենսական նշանակություն) և երկրորդ՝ Եգիպտոսում տեղի ունեցող երկպառակչական կռիվները Դամասկոսի կառավարիչ Սոնկուրի և սուլթանի միջև ավարտվել էին: Նման պայմաններում մոնղոլները հարկադրված էին նահանջել[1]: Բայց այդուհանդերձ կարծում ենք, որ ի սկզբանե 1280 թ. արշավանքը ունեցել է ավելի շատ հետախուզական և ավարառուական նշանակություն: Դրա մասին է վկայում այն, որ Աբաղայի բանակի արշավանքը սրընթաց էր թե՛ հարձակման և թե՛ նահանջի ընթացքում: Ինչևէ, երկար նախապատրաստված արշավանքը սկսվեց 1281 թ. աշնանը Աբաղա իլղանի եղբոր՝ Մանգու Թիմուրի գլխավորությամբ. Մոնղոլական բանակի նվազագույն նպատակն էր Ասորիքի նվաճումը, իսկ հաջողության դեպքում լևանտյան ծովեզերքից մինչև Եգիպտոս գրավումը: Ինչպես վերը նշվեց, դիվանագիտական տեսանկյունից ի տարբերություն մամլուքյան կողմի, մոնղոլական կողմը ձախողեց: Աբաղայի միակ «արժեքավոր» դաշնակիցը Լևոնն էր: Ճիշտ է, մոնղոլական բանակի մեջ ներառված էին նաև վրացական բանակի զորամասեր, ինչպես նաև Մեծ Հայքի զինվորականություն, բայց նրանք ներառված էին որպես իլղանի վասալներ և ոչ ավելին: Վճռական ճակատամարտը կողմերի միջև տեղի ունեցավ 1281 թ. հոկտեմբերի 30-ին Հոմսի մոտ: Մոնղոլական բանակի (այս պարագայում թեպետ կարող ենք լիարժեքորեն անվանել հայ-մոնղոլական բանակ) աջ թևի ղեկավարությունն իր վրա էր վերցրել Լևոն Բ-ն. «... թագաւորն Հայոց վարէր աջ թևն հանդերձ քրիստոնէիւք: Ուստի դիմեաց ինքն ի վերայ ձախոյ թևի սուլդանին Եգիպտոսի, և ի փախուստ դարձոյց թշնամիս եռօրեայ ճանապարհաւ մինչև ի քաղաքն համս և անդր ևս»[2]: Այսպիսով Լևոնին էր հանձնվել մոնղոլական բանակի քրիստոնեական զորախմբերի հրամանատարությունը: Չնայած հայկական կողմի հաջողություններին այդուհանդերձ մոնղոլները ջախջախիչ պարտություն կրեցին: Արդյունքն իրապես աղետալի էր հայկական կողմի համար. հայոց թագավորը հանկարծակի գալով մոնղոլների անկանոն ու խուճապահար փախուստից՝ մեծ կորուստներ կրելով կարողացավ դուրս գալ հնարավոր օղակումից և վերադառնալ Կիլիկիա: Ղ. Ալիշանի մոտ նույն 1281 թվականի տակ կա մի տեղեկություն, ըստ որի 1281 թ. թուրքմենները ասպատակում են Կիլիկիան և հասնում են մինչև Այաս: Այստեղ հայկական զորքերին հաջողվում է ջախջախել և դուրս շպրտել նրանց երկրի սահմաններից[3]: Եթե հավատանք թվագրմանը, ապա այն տեղի է ունեցել հայ-մոնղոլական արշավանքի շրջանում, սակայն խնդիրն այն է, որ անվանի հեղինակը հայ-մոնղոլական արշավանքը թվագրել է 1280 թ. և թուրքմենների գրոհն էլ տեղադրել է անմիջապես արշավանքից հետո: Ըստ երևույթին այստեղ գործ ունենք ժամանակագրական փոքրիկ շփոթի հետ: Թուրքմենների ավարառուական արշավը ըստ ամենայնի տեղի է ունեցել 1282 թ., հայ-մոնղոլական զորքերի պարտությունից հետո: Հայտնի չէ Աբաղա իլղանի հետագա մտադրությունները տարածաշրջանում քաղաքական իրադրության փոփոխության հարցում, քանի այս պարտությունից ընդամենը մի քանի ամիս անց 1282 թ. գարնանը նա մահացավ: Հայ տարեգիր Անանուն Սեբաստացին հետևյալ տեղեկություններն է ներկայացնում իլղանի մահվան մասին. «Ի թվին ՉԼԱ (1282) մեռաւ Ապաղայ ղանն դեղով մահու ի Հեմիան, նոյնպես և եղաբյր նորա Մանկու Տամուրն»[4]: Գերիշխող վարկածն այն է, որ իլղանը մահացել է հարբեցողության պատճառով[5]: Այդուհանդերձ մեր առջև տվյալ

---

[1] Հովհաննիսյան Ա., Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ., Ե., 2008, էջ 92:
[2] Հեթում պատմիչ, էջ 55:
[3] Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ,1885, էջ 556:
[4] Մանր ժամանակագրություններ XIII-XVIIIդդ., կազմեց Վ. Հակոբյանը, հատոր 2-րդ, Ե., 1956, էջ 148:
[5] Encyclopaedia Iranica, http://www.iranicaonline.org/articles/abaqa

հարցը պարզելու խնդիր չդնելով փաստենք, որ անանուն Սեբաստացին դեպքերին ժամանակակից հեղինակ էր և կարծում ենք, որ առավել հավանական է հենց թունավորման վարկածը, մանավանդ որ սպանվում է նաև իլղանի եղբայրը՝ սիրիական արշավանքի հրամանատարը: Դրա մասին է վկայում նաև հաջորդ իլղանի՝ Թագուդար-Ահմեդի գահակալումը: Վերջինս գահակալում է երկու տարի և դառնում է առաջին իլղանը, որն ընդունում է մահմեդականություն: Այդ փաստը հաշվի առնելով կարող ենք ենթադրել, որ Աբաղայի և եղբոր սպանության և մահմեդական նոր տիրակալի գահակալման հարցում մասնակցություն պետք է, որ ունեցած լինեին նաև մամլուքները: Ասվածի ապացույցն է նաև այն հանգամանքը, որ գահ բարձրանալով՝ Թագուդար-Ահմեդը բանակցություններ է սկսում վերջիններիս հետ՝ բավական ծանր կացության մեջ թողնելով հայոց արքային: Որ հայ-իլղանական հարաբերությունները Թագուդարի կառավարման շրջանում ամենևին էլ ոչ դաշնակցային էին, վկայում է այն հանգամանքը, որ, ի տարբերություն նախորդ և հաջորդ իլղանների, հայոց արքան այդպես էլ չմեկնեց շնորհավորելու և իր հավատարմությունը հայտնելու նոր իլղանին: Ինչևէ, հայոց թագավորությունը իրապես հայտնվել էր բավական ծանր ռազմաքաղաքական իրադրության պայմաններում: Կարող ենք փաստել, որ մամլուքյան սուլթանությունը օգտագործելով այն հանգամանքը, որ Լևոն Բ-ն մնացել էր առանց դաշնակցային օժանդակության՝ որոշեց հայ-մոնղոլական արշավանքի վրեժը լուծել հենց հայերից: Հայոց թագավորությունը անպաշտպան դրության մեջ էր հայտնվել. նախ շատ մեծ էին ձախողված արշավանքի զինվորական կորուստները, երկրորդ (և այս հանգամանքը առավել կարևոր էր)՝ դեռ 1268 թ. մամլուքների հետ կնքած հաշտության պայմանագրով, որի արդյունքում մասնավորապես Լևոնը հետ վերադարձվեց մամլուքյան գերությունից, հայկական կողմը սահմանային բերդեր էր զիջել սուլթանությանը: Խնդիրն այն էր, որ վերոգրյալ բերդերը հանդիսանում էին Դաշտային Կիլիկիայի բանալիները և այժմ արդեն հայկական թագավորության սահմանները փաստացիորեն մնացել էին անպաշտպան: Այդ հանգամանքից էլ առնվազն երկու անգամ օգտվեցին մամլուքները: Մասնավորապես արդեն 1282 թ. դեկտեմբերին հիշատակվում է Այասի վրա կատարված հարձակումը. «... ի թվին Հայոց ՉԼԱ (1282)...: Ի քաղաքն Եգիոյ, որ է Այաս... եղև յանկարծակի շրջաբնակաց ոմանց Իսմաէլացոց, որ յայսմ ժամանակի զզուէին զերկիրն, արշաւեցին ի քաղաքն Այաս և որ շուրջ զնովաւ գեաղք և աւանք,զբազումս գերեցին, և զայլս սրախողծող արարին»[1]: Հայկական կողմը չկարողացավ պատշաճ պաշտպանություն կազմակերպել, իսկ մամլուքների հեռանալն էր պայմանավորված էր այն հանգամանքով, որ վերջիններս ի սկզբանե իրենց առջև նվաճողական խնդիր չէին դրել: Արշավանքը փաստացիորեն ուներ պատժիչ, ավարառուական և մասամբ հետախուզական նշանակություն: Նմանատիպ արշավանք կրկնվեց նաև 1283 թ., այս անգամ մամլուքների դեմ Լևոնը բանակ դուրս բերեց, սակայն Ալեքսանդրեկի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայկական բանակը ջախջախվում է, իսկ մամլուքները ավարառության ենթարկելով Դաշտային Կիլիկիան՝ անարգել հեռանում են հետ[2]: Ավարառուական արշավանքները դեպի Այաս կրկնվում են նաև 1284 թ.: Նրանց հաջողվում է ավերի մատնել քաղաքի շրջակայքը և ապա նահանջել: Նույն 1284 թվականով է Ղ. Ալիշանը թվագրում նաև Անամուռ նավահանգստային ամրոցի վերագրավումը սելջուկներից[3]: Կարելի է ընդհանրացնել, որ օգտվելով մոնղոլական տերության ներսում առկա անկայուն քաղաքական իրադրությունից՝ սելջուկները, մամլուքները և նույնիսկ տարատեսակ թուրքմենական ցեղախմբերը այս շրջափուլում գործում էին համագործակցաբար: Այս տարիների վերաբերյալ, երբ իլղանությունում իշխանության էր եկել Թագուդար-Ահմեդը Մ. Օրմանյանը կարծիք է հայտնում, որ Լևոնը որոշակիորեն ակտիվացնում է իր քաղաքականությունը Մեծ Հայքում, ի մասնավորին օրինակ բերելով Լևոնի կողմից Տաթևի վանքին և ընդհանրապես Սյունյաց բավական ազդեցիկ թեմին տրված արքայական ընծաները: Հե-

[1] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյանը, Ե., 1984, էջ 529:
[2] Makrizi, Histoire des sultans mamelouks, t. 1, Paris, 1837, p. 63.
[3] Ալիշան, Սիսուան, էջ 556:

ղինակավոր հայագետի կարծիքով դա դեպի Մեծ Հայք ընդլայնվելու ծրագրի (որն անշուշտ առկա էր հայոց թագավորության գրեթե ողջ 13-րդ դարի վարած քաղաքականության հեռահար տեսլականում) արտացոլանքն էր և, որ Լևոնը իրական քայլեր էր կատարում դրա ուղղությամբ[1]: Դրա համատեքստում է ներկայացվում նաև այն, որ հայոց թագավորը Մեծ Հայքում «ձեռքերի ազատություն» ստանալու համար 1282 թ. հաշտություն է կնքում մամլուքների հետ: Սակայն 1282 թ. որևէ հաշտություն մամլուքների հետ չի կնքվել, 1282 թվականով թվագրվող տեղեկությունը որը թողել է Ղ. Ալիշանը[2], զինադադար, այլ ոչ հաշտության համաձայնագիր էր երկու երկրների մեջև, որն ընդամենը ազդարարում էր ակտիվ ռազմական գործողությունների ավարտը: Այդ տարիներին ընդհուպ մինչև 1285 թ. հայոց թագավորի արտաքին քաղաքականությունը հիմնականում և գրեթե բացառապես միտված է եղել կիլիկյան թագավորության ֆիզիկական անվտանգության ապահովումը հենց մամլուքներից: Նման պայմաններում, որքան էլ որ «վերադարձ դեպի նախնյաց հայրենիք» գաղափարը idea fix լիներ հայոց միապետի համար, նրա առաջնային նպատակը կար և մնում էր հայոց թագավորության գոյության պահպանումը, ինչն այդ տարիներին իրապես վտանգված էր: Չնայած այն հանգամանքին, որ 1284 թ. իլղանությունում տեղի ունեցավ հերթական հեղաշրջումը, սպանվեց Թագուդար-Ահմեդը և գահ բարձրացավ հակամահմեդական հայացքներ ունեցող և հակամամլուքյան քաղաքականության ջատագով Արղունը, այդուհանդերձ Լևոնը հարկադրված էր մամլուքների հետ հարաբերություններում գնալ զիջումների: Ընդ որում, առաջ անցնելով նշենք, որ Արղունի վեց տարի տևած նամակագրությունը եվրոպական միապետերի ու Հռոմի պապի հետ ևս որևէ արդյունք չտվեց, հակամամլուքյան կոալիցիայի գաղափարը այդպես էլ մնաց թղթի վրա: Ինչևէ նման պայմաններում Լևոնը, թեև դեռ 1283 թվականից սկսյալ բանագնացներ է ուղարկում Եգիպտոս, բոլոր այդ փորձերը ձախողվում են, իսկ պատվիրակությունների անդամները ձերբակալվում: Ի վերջո միայն 1285 թ. մայիսին կնքվում է հաշտության համաձայնագիրը հայոց թագավորության և մամլուքների միջև: Մամլուքների համաձայնությունը պայմանավորված էր Արղունի ակտիվ արտաքին քաղաքականությամբ և Լևոնին հակամամլուքյան կոալիցիայից դուրս բերելու ցանկությամբ: Ստեղծված իրադրության պայմաններում Լևոնի այս քայլը միանգամայն արդարացված էր: Ո՛չ եվրոպական երկրները, ո՛չ խաչակրաց պետությունների մնացորդները տարածաշրջանում իրական ազդեցություն այլևս չունեին: Թուլացել էր նաև մոնղոլական ներկայությունը և հույս դնել վերջիններիս տեսական օգնության վրա և ենթարկվել անընդմեջ արշավանքների հայկական կողմը չէր կարող: Հարկավ Հայոց թագավորի այս քայլը չէր կարող ողջունելի լինել նոր գահ բարձրացած Արղունի կողմից: Վերջինս, ինչպես վերը նշվեց, ուներ հակամամլուքյան դիրքորոշում և ամեն ինչ անում էր նրանց դեմ նոր դաշինք ձևավորելու համար: Այդ դաշինքում առանցքային տեղ պետք է վերապահվեր հայոց թագավորությանը: Ցավոք պարզ չէ Արղունի մոտեցումները Լևոնի հաշտություն կնքելու գաղափարի վերաբերյալ: Մի բան ակնհայտ է, որ այն չէր կարող ողջունելի լիներ մոնղոլների համար, բայց միևնույն ժամանակ իլղանը չկարողանալով ապահովել իր դաշնակցի անվտանգությունը՝ հարկադրված էր նաև ակամա համաձայնվել վերջինիս՝ մամլուքների հետ կնքած հաշտության գաղափարին: Ի վերջո 1285 թ. մայիսին կնքվում է հայ-մամլուքյան հաշտության պայմանագիրը: Առաջ անցնելով նշենք, որ համաձայնագիրը բավական հաջող էր Հայոց թագավորության համար, մանավանդ, եթե հաշվի առնենք ստեղծված աննպաստ ռազմա-քաղաքական իրադրությունը: Պայմանագրի գործունեության ժամկետ էր նշվում տաս տարի, տաս ամիս, տաս օր, տաս ժամ ժամանակացույցը: Առաջին հատվածը վերաբերում էր առևտրա-տնտեսական հարաբերություններին: Եվ պետք է նշել, որ սա պայմանագրի առանցքային հատվածն էր: Սա ցույց էր տալիս, որ կրոնական անհանդուրժողականության դրսևորումներով հանդերձ մամլուքյան տերության տիրակալների համար առաջնային տեղ ունեին տնտեսական խնդիրները: Եվ հենց

[1] Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, սյուն 1974:
[2] Ալիշան Ղ., Սիսուան, էջ 164:

տնտեսական բաղադրիչով պայմանավորված քաղաքական թշնամանքը հայկական ու մամլուքյան պետությունների միջև առավել ակնառու պետք է դառնար 14-րդ դարում: Ինչևէ, համաձայնագրով հայոց թագավորը պարտավորվում էր տարեկան վճարել 500 հազար արծաթ դիրհեմ հարկ. այդուհետ մոտ տասնամյա ռազմական գործողություններից հետ երկու կողմերն էլ իրենց մոտ առգրավել էին միմյանց հպատակ առևտրականներին ու նրանց ունեցվածքը, այդ համատեքստում Լևոն Բ-ն պարտավորվում էր ազատ արձակել ձերբակալված բոլոր մահմեդական առևտրականներին: Կողմերը պարտավորվում էին ազատ ելումուտի հնարավորություն տալ երկու երկրների հպատակ առևտրականներին, բացի դա նմանատիպ պարտավորություն դրվում էր միայն հայկական կողմի վրա՝ ապահովելու այն առևտրականների անվտանգությունը սեփական տերության տարածքում, որոնք ուղևորվում էին Եգիպտոս: Եգիպտական շուկաներում հայ առևտրականներին, բացառությամբ զենքի առևտրի, մի շարք արտոնություններ էին տրվում: Տնտեսական հարցերից զատ առաջին հայացքից բավական փոքր տեղ էր զբաղեցնում պայմանագրի քաղաքական հատվածը, որում մասնավորապես նշվում էր, որ հայոց թագավորը պարտավորվում է չկառուցել նոր ամրոցներ: Բացի դա հայկական կողմը պարտավորվում էր օգնություն ցույց չտալ սուլթանի հակառակորդներին[1]: Անշուշտ հայ-մամլուքյան համաձայնագիրը կարելի էր համարել ձեռքբերում հայկական դիվանագիտության համար, բայց տնտեսական առումով ոգևորիչ չէր ամենամյա հարկի առկայությունը, թեև դա ամենևին չէր խոչընդոտելու հայկական տնտեսության դինամիկ զարգացման գործընթացին: Դրա վկայությունն էր, որ 13-րդ դարավերջին հատկապես Այասը էլ ավելի ամրապնդեց իր դիրքերը արևելյան Միջերկրածովում: Դրան զուգահեռ ծանր զիջում էր մամլուքների հակառակորդների հետ չհարաբերվելու խոստումը, բայց ստեղծված պայմաններում դա նվազագույն զիջումն էր: Միևնույն ժամանակ, հեռու ենք այն մտքից, որ հայկական թագավորությունը եթե հետևեր այս պայմանագրի քաղաքական հատվածի դրույթներին և չհարաբերվեր եգիպտոսի թշնամիների հետ ապա դա հնարավորություն կտար զերծ մնալ մամլուքյան պետության հետ ուղղակի առճակատման հեռանկարից, որն էլ ի վերջո հարյուրամյակ անց պետք է հանգեցներ հայոց պետականության անկմանը: Ինչպես ցույց տվեց հետագա տասնամյակների ընթացքը, մամլուքյան պետության և հայկական թագավորության համատեղ գոյակցությունը Արևելյան միջերկրածովի առևտրա-տնտեսական հարաբերությունների տիրույթում անհնարին էր: Ինչ վերաբերում է մամլուքների՝ Քալաուն սուլթանի կողմից նման մեղմ պահանջներ թելադրելուն, ապա պետք է հաշվի առնենք նաև իլղանության գործոնը, որտեղ արդեն գահ էր բարձրացել Արղունը, և սուլթանը այս պարագայում ձգտում էր հնարավորության դեպքում նվազեցնել մոնղոլներ պոտենցիալ դաշնակիցների քանակը, ինչն էլ որ արեց հայ-մոնղոլական համաձայնագրի տեսքով: Այդուհանդերձ սա ժամանակավոր համաձայնություն էր, որը շատ լավ հասկանում էին երկու կողմերն էլ և որի վկայությունը դարձավ ընդամենը մի քանի տարի անց վերսկսված առճակատումը:

Давит Тиноян, Внешняя политика Левона 2-го в начале 1280 гг.. Последняя четверть 13-го века поистине была переломным в истории Киликийского армянского государства. Начавшееся в середине 13-го века становление монгольского владычества в Передней Азии дошло своего апогея и начался постепенный упадок этой силы. В этом сложном периоде правил Левон 2-ой. На него долю было возложено обеспечение жизнеспособности Армянского государства. Ему удалось с честью выйти из сложившейся сложной ситуации.

Ключевые слова: Царь Армении, регион, ильханство, государства крестоносцев, мамелюки, Передняя Азия,армяно-мемелюкский договор, эпоха.

[1] Բակուրան, Դաշնագիր խաղաղութեան ընդ մէջ Լեւոն Գ թագաւորի եւ Եգիպտոսի մեմլուքեան սուլթան Գալաւունի, կնքուած 1285 թ. մայիսի 7-ին, Բանասէր, Հատոր Դ, թիւ 1, Պարիս,1902, էջ 75-76:

Davit Tinoyan, The foreign political course of Levon II in the first half of 1280s. The last decades of the 13th century were indeed a complicated period for the Armenian kingdom when considered its domestic and foreign political affairs. The Mongolian state, which was the most influential political power in the region in the previous period,was gradually weakening. In that sense, it was fatal to suffer a defeat from the Mamluks at the beginning of the decade, which predetermined the beginning of the future dominance in the region. Therefore, the Armenian King Levon II was forced to spend a great deal of diplomatic effort to ensure the existence of the state under such conditions.The Armenian King succeeded finally in resolving this important issue.

Key words: King of Armenia, region, ilkhanat,mameluks, Armenian-mameluks treaty, states of crusades.